

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արմավիրի մարզի Փշատավան համայնքի 2013թ.2-րդ կիսամյակին կատարած աշխատանքների:

2-ր կիսամյակում հրավիրվել է ավագանու 8 նիստ, 7-րդ նիստով փոփոխություն է կատարվել 2013թ բյուջեում:

Դրամական օգնություն է ցուցաբերվել համայնքի 7 անապահով ընտանիքներին, որի համար տրամադրվել է 280000 դրամ:

Համայնքի առևտրի օբյեկտների նկատմամբ պարբերաբար հսկողություն է իրականացվում:

20.09.2013թ կատարվել է շաբաթօրյակ, որի ժամանակ մաքրվել է համայնքի կենտրոնական ճանապարհները՝ կուլտուրայի տան և հարակից այգու տարածքը կուտակված աղբից:

Խմելու ջրի ջրագիծը բավականին հին է, որի պատճառով անխուսափելի են ջրագծի վթարները: Բավականին աշխատանք է տարվել որպեսզի ձմռանը ինչքան հնարավոր է քիչ լինեն նմանատիպ վթարներ:

Բնակչությանը խմելու ջուր է մատակարարվում օրվա ընթացքում 4 ժամյա գրաֆիկով:

8-րդ նիստով գումար է տրամադրվել համայնքի 5 անապահով ընտանիքներին տրամադրվել է 150000 դրամ դրամական օգնություն:

փոփոխություն է կատարվել 2013 թվականի բյուջեի և հաստիքացուցակի մասին որոշման մեջ:

9-րդ նիստով հաստատվել է Փշատավան համայնքի աշխատակիցների թվաքանակը, աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը:

15.10.2013 թվականին համայնքի բնակիչների , աշխատակազմի ներկայացուցիչների ներկայությամբ ներկայացվեց Փշատավան համայնքում հուլիս , օգոստոս և սեպտեմբեր ամիսների ընթացքում համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը:

10-րդ նիստով փոփոխություն է կատարվել Փշատավան համայնքի ավագանու բյուջեի և հաստիքացուցակի մասին թիվ 32-Ն որոշման մեջ: Դրամական օգնություն է տրամադրվել համայնքի սոցիալապես անապահով 12 ընտանիքների ընդհանուր առմամբ 410000 դրամ:

Փշատավան համայնքի հակակարկտային կայանների սպասարկման համար ավագանին որոշում է եռամսյակը 90000 դրամ տրամադրվի:

Զիջվել է Փշատավան համայնքի բնակիչ Արծրուն Նալբանդյանի , ավտոմեքենայի գույքահարկը:

20.11.2013 թ. հաստատվել է Փշատավան համայնքի համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի ավագանու կազմը:

Փշատավան համայնքի բնակիչ Անուշ Քյարամյանի ուսման վարձի հաշվեհամարին է փոխանցվել 50000 դրամ:

Փշատավան համայնքի բուժ.ամբուլատորիային տրամադրվել է 100000 դրամ մվիրատվություն:

Համայնքի գյուղամիջյան ճանապարհների մեծ մասը անանցանելի են, այս վիճակը մեղմացնելու համար հարթվել և ավագ է լցվել այդ ճանապարհների վրա:


2013թվականի հողի հարկի և գույքահարկի
 հավաքագրումը հետևյալն է՝

2-րդ կիսամյակ	հողի հարկ	5285200 դրամ
	գույքահարկ	1904001 դրամ
	հողի վարձավճար	575800 դրամ
	տեղական տուրք	23800 դրամ
	Խմելու ջրի վարձ.	412200 դրամ

Փշատավան համայնքի հիմնախնդիրներ՝

1. Փշատավան համայնքի մշակույթի տան տանիքի վերանորոգում:
- 2 Փշատավան համայնքի մշակույթի տան մուտքի աստիճանահարթակի վերանորոգում:
3. Փշատավան Արգավանդ ճանապարհի կապիտալ նորոգում:
4. Համայնքի լիարժեք գազաֆիկացում:

Համայնքի ղեկավար



Ռ. Ստեփանյան

